



Թիֆլիզում հաստի՛ 7 կ-

ԱՌԱՋԻՆ 1906 ՏԱՐԻ

Այլ տեղերում զինն է՛ 8 կ

№ 40

ԿԻՐԱԿԻ, 12-ՈՆ ՆՈՅՄԵՐԵՐԻ

№ 40

Շարունակում է բաժանորդագրութիւնը
ՎՇԻՆՏԱՆՔԻՍ

Բաժանորդագին տարին 4 ռ.
 Կէս տարին 2 ռ.
 Սեպտեմբերից մինչև յունւար. . . 1 ռ. 50 կ.
 Հասցէն՝ Тифлисъ, редакция журнала «Аш-
 хатанкъ» Бебутовская № 56.
 Խմբագիր-հրատարակիչ՝ Ա. ԱՔԱՆԱՍՅԱՆ

ՀՈՂԱՉՈՒԿՆԵՐ՝ ԿԱՉՄԵԿԵՐՊԻՑԵՒՔԻ!

Թիֆլիս, 12-ին նոյեմբերի

«Հող չունենք...»

Անա մի ճիշդ մի ազգակի, որ լսում ենք
 ամեն կողմից մեր երկրի գիւղացիութեան մե-
 ծագոյն մասից:

—Հողներս քիչ է, նա մեզ բաւականու-

թիւն չէ տալիս, գանձաւում են տասնեակ հա-
 զարաւոր մարդիկ, հողի մշակները, հողով ապ-
 րոզները, հողի հետ կապւածները:

—Մենք բազմացել ենք, իսկ մեր հողը նոյնն
 է մնացել—աս արդէն ընդհանուր ցաւ է, որ
 հանում են մեր ականջին ոչ միայն մեր երկ-
 րում, այլ և համայն Ռուսաստանից:

—Հող տւէք—խնդրում են հողագործները,
 պակաս հող ունեցողները, խնդրում են աղաչում,
 իսկ երբեմն և սպառնում:

Գոյութեան կռիւն է, գոյութեան պահանջն
 է, մի արդար և բնական կռիւ ու պահանջ, ծիֆէ
 կան միլիոնաւոր մարդիկ, որոնք հողի արդիւնք-
 ներով են ապրում, և նոյի հետ են կապել իս-
 րինց կեանքն ու բախտը—ուրեմն ուզենք չու-
 զենք մենք պլսխ է լուրջ վերաբերմունք ունե-
 նանք դէպի դրանց:

Ինչ ենք պատասխանում մենք այս բնական
 արդար պահանջներ անողներին. ասում ենք—

հող չկայ, որտեղից հող տալ:

Իսկ նրանք ցոյց են տալիս ձեզ հազարաւոր դեռեստիին պետական հողերի վրայ:

—Ահա հող—տւէք մեզ, բաժանեցէք մեր մէջ և մենք հնարաւորութիւն կունենանք ապրելու:

Միւսները ցոյց են տալիս կալածատիրական, մասնաւոր ստանեակ և հարիւր հազարաւոր դեռեստիին հողերի վրա և ասում են.

—Ահա հողեր, լաւ մշակելու, յարմար հողեր, տւեք մեզ մշակեմք, ապրենք:

Ի՞նչ ենք պատասխանում զրանց, երբ նւրանք զիտեն թէ, ուր են ազատ հողերը, լաւ հողերը:

Ասում ենք, դիմեցէր կատարութեանը, դիմեցէր հողի տէրերին, կալածատէրերին, պայմանաւորեցէք նրանց նեւ և մշակեցէք այդ հողերը, ապրէք ձեր աշխատանքով:

Իսկ հողի աշխատաւորները ասում են ձեզ՝

—Մեծ փող են ուզում, աճադին կապալ պահանջում զրանց տէրերը, ծանր պայմաններ առաջարկում, իսկ միւսը ոչ փող ունենք, և ոչ միջոց՝ վճարելու զրանց, մենք հալից ընկած ենք, ձրտեղից վճարենք:

Ի՞նչ պատասխան տանք այս առարկութեանը բանի որ նա արգարացի է, իրականութիւն է:

Ի՞նչքան ձեր ուսելը վեր էք բաշում և ասում:

—Աշխատեցէք, մի կերպ եօյա զնացէք: Եօյա զնացէք, աշխատեցէք:

—Իայց չէ որ մինչև օրս եօյա ենք զնացել, աշխատել ենք և ահա այս օրին ենք հասել—ասում են ձեզ:

Ի՞նչ արդար է այդ պատասխանը, իրականութիւնն է խօսում նրանց բերնով:

Ուրեմն...

Այլ պատասխան չկայ:

Եւ զիւզացին, հողադուրկ գուղացին գնում է. գնում է զիւղ, տեսնում է իր բողոքած ընտանիքը՝ հողի պակասութիւնից, երբ այնքան հողեր կան շրտ կողմը, աղատ, լաւ հողից, բայց հողեր, որոնց մշակելու համար, որոնցից օգտուելու համար սննդամեղս են բաներ, որ նա չունի. և... զիւզացին առանց երկար մտածելու լուծում է հողային հարցը:

Նա առանց թոյլուրութեան, առանց պայմանի յծում է իր գութանը ու գնում, վարում իր

մօտի հողը, ուրիշի ազատ հողը:

Այսպէս է վճռում կարիւր հողի սովը, հուղային հարցը:

Այնուհետև զալիս է զօրքը, թնդանօթը, աւերը, կոտորածը... պատժելու յանցագործին: Ո՛ւր է նրա յանցանքը...

Ա. Ա.

ԴԷՊԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՌՔԱՐ:

Շուտով, համաձայն Կայսերական Մանիֆէստի, պիտի գումարել համառուական երկրորդ Գուման:

Առաջին ընտրութիւններում, ինչպէս յայտնի է, սօցիալիստների մի մասը (բոլշեւիկները) որպէս և սօցիալիստ յեղափոխականները յայտարարեցին ընտրուելու նրանց նետեցին՝ Դասակցութիւնը և հայ բանաւորական կազմակերպութիւնը (սօցիալիստ օրգանը): Այժմս բոլոր սօցիալիստական կուսակցութիւնները և Դասակցութիւնը հասկացել են իրանց սխալը և փաստակար տակտիկան և վճռել են ստանալու իր կերպով մասնակցել նոր ընտրութիւններին:

Բոլորով, ինչպէս կուսակցութեան տակտիկայ, այլևս գոյութիւն չունի: Իայց բոլորի փաստակար գաղափարը զեւ կենդանի է անգիտակից(?) մասսաների մէջ, այդ հանգամանքը առիթ է տալիս մեզ համառու կերպով քննութեան ենթարկել ընտրութիւնները:

Ահա դարձք. 1) Ռուսաց սահմանադրութիւնը լի է պակասութիւններով, 2) Գուման բուրժուազական ընտրութիւն է կրում, 3) պարլամենտական գործունէութիւնը թուլացնում է յեղափոխութեան ոյժը և 4) Գուման հնարաւորութիւն է տալիս կառավարութեանը փոխադրութիւններ անել:

Այս հարցը՝ արեւօք մասնակցել թէ ոչ պարլամենտական գործունէութեանը, նոր չէ սօցիալիստական կուսակցութիւնների կեանքում: Դեռ 70-ական թվականներին սօցիալիստական մասսան բաժանելու երկու ուղղութեան՝ Մարիսիսի մի և Բակունիսի մի, Մարիսիսի կամ այժմեան սօցիալիստ պարլամենտում է իւր մէջ երկու վեան գաղափար՝ պետական իշխանութեան կենտրոնացում և պարլամենտական գործունէութիւն, Բակունիսի կամ անարիսիսի ֆեդերացիայի և տեռօ-

ըրզմի պաշտպան է: Անարխիզմը, որպէս քաղաքական ոյժ, շատ չնչին է, բայց անարխիստական մտածողութիւնը նորից և նորից երևան է զայիս նոր զարթոնքը, անդիտակից մասսաների մէջ: Անարխիստները իրենց երկրորդ հիւրը, որը կապ ունի մեր նիւթի հետ, պատճառաբանում են այսպէս:

«Այժմեան պետութիւնը և բոլոր հասարակական հիմնարկութիւնները (եկեղեցին, դատարանը ուսումնարան և այն) բուրժուազական են. բուրժուազական է և պառլամէնտը: Պառլամէնտը ամենամեծ ղէնըն է տիրապետող դասակարգերի ձեռքում՝ խաբել արքայս ժողովուրդը, կեղերիկ նրան, նստմանից յեզպիտական ետուղղել: Ամենադժմօրբայիկ կառավարութիւնը նոյնքան բացասական և հակաժողովրդական հիմնարկութիւն է, ինչպէս և անաւանան միապիտութիւնը: Մասնակցել պառլամենտական գործունեութեան նըշանակում է ուժեղացնել այժմեան կարգերը: Անկեղծ յեզպիտականները հեռու պիտի մնան այդպիսի ֆրասակար տակիրակից: Նրանց միակ գործը — յեզպիտութիւնն կամ, աւելի հիշու աւսած, աէտիտական կորնէլ այժմեան պետութեան զոհն Անարխիզմը, ինչպէս ասացինք, հետևանք է ծարաւեղ բաժնութեան և մասսաների անդիտակցութեան: Զարմանալի չէ, որ անարխիստների պարագլուխ՝ Բակունինը ոուս սպայ էր և որ մտածողութեան այդ ձևը յատուկ է այս կամ այն շախով ոուս սոցիալիստական շարժումներին: Բուլճիկները, սոյիալիստ յեզպիտականների և Դաշնակցութեան *) բոլիտոր անարխիստական արմատներ ունին:

Բոլիտիստների գլխաւոր ապացոյցը՝ Դուժայի պակասութիւններն էին: Հերքել այդ վատոր անհարկն է: Դուժան իրաւունք չունի բննել օհիժական օրէնքները և մինիստրութեան բաղադրականութիւնը: Մինիստրութիւնը պատասխանաւոր չէ, այսինքն մինիստրները հպատակուում են կայսրին, պետական խորհուրդը մի այնքանոց հիմնարկութիւն է: Ընտրողական օրէնքը հակասում է ամենատարրական պահանջներին: Այդպիսի պայմաններում անհարկն են արմատական բարենորոգումներ: Դուժան-պառլամենտ է, բայց յորոգածին և թուլակազմ (տես այքը, «ДРАВО»):

* Դաշնակցութեան վերաբերմամբ այդ հայեացքը թիւրիմացութիւն է:

Բոլիտի հակաակորդները այդ պայմանները նոյնպէս լաւ էին նախակտում, ինչպէս և կողմակիցները: Նկատողութիւնը ճիշտ է, բայց եզրակացութիւնը սխալ է: Հետեողական ինքուր համար պիտի հեռու մնայ ոչ միայն Դուժայից, այլ և դատարանից, ուրիշ պետական ծառայութիւնից, ուսումնարաններից և առհասարակ բոլոր հիմնարկութիւններից, որոնք պարունակում են պակասութիւններ և անարդարութիւններ: Սյը, ի միջի այլոց, պահանջում է ամենահետեողական անարխիստ՝ կոմս Տոլստոյը: Դառն իրականութիւնը ցոյց է տալիս, որ այդ անարխիստական կրեւորական կոխը հասարակական շարժքերի զէտ (НЕПОДВИЖНОЕ ДЪЯ ДЛОМЪ) չի հանում իր նպատակներին: Սթէ առաջադէմ մարդիկ չվարեն պատգամաւորի, գատաւորի, ուսուցչի պաշտօն, այդ պաշտօնները կանցնեն ամենալիստական կրեւակցութիւնների ձեռքը: Դուժան, դատարանը, վարժատունը այդ պարագայում աւելի ֆրասակար դեր կկատային հեանքում:

Հարցը կարելի է բննել ուրիշ տեսակէտից: Պառլամենտը ոչ միայն օրէնսդիր հիմնարկութիւն է, այլ և որոշող միջոց սոցիալիստական զուղւիւս ներ սարածմելու: Մտաւը, ժողովները, և սոցիալիստական գրականութիւնը չեն կարող այնքան խորը տպաւորութիւն թողնել, այնքան ազդել օգէտ ամբոխների վրայ, ինչպէս պատգամաւորների ճառերը և հարցապնդումները: Սոցիալիստական պատգամաւորները, իննելով սակաւթիւ, չեն կարող իրենց կամքը թեպադրել պարլամենտներին: Ազգային ժողովի բարոյական կամ սոցիալատորական նշանակութիւնն է, որ ստիպում է սոցիալիստներին ամենաակտիւ կերպով մասնակցել ընտրողական օլայքարներին: Մեր առաջին Դուժան, ինչպէս յայտնի է, ոչ մի դըրական ռէֆորմ չկարողացաւ իրագործել: Բայց նա մեծ զորի տեք բաղադրական ինքնաճանաչութեան:

Բուլճիկները, սօցեալ յեզպիտականները միշտ մտածում էին Դուժայի այդ յասկութիւնը: Բուլճիկները, ինչպէս և անարխիստները, մասնացոյց էին անում Դուժայի բուրժուազական բնաւորութեան վերայ: Այդ նկատողութիւնն էլ ճիշտ է: Բոլոր պարլամենտներում սօցիալիստները փորքամասնութիւն են կազմում, նոյնն է և Ռուսաստանում: Այդ երկույթը դեռ շատ տարի-

ներ կրտսէ, Բայց ինչպէս Դումայի պակասութիւնները, նոյնպէս նորա բուժութեան ընտրութիւնը չեն արդարացնում բոլորի տակաւորին: Պարապէսները բուժութեան էին և են, բայց համաձայն ընդհանուր հասարակական օրէնքներին, նրանք միշտ թեւում են դէպի ձախ՝ դէպի սօցիալիզմ, շինք կայ մտածելու, որ սօցիալիզմը կարող է իրագործել խաղաղ պայմաններում միջոցով: Այդ բնույնում է նաև կառուցելին (տես. բուժ. և արտ. բնութագրերը), այն միտքը, որ սօցիալիստական յեղափոխութիւնը իր ձևերով և միջոցներով կլինի նման ֆրանսիական մեծ յեղափոխութեան (խօսքը գլխում ամ պարտաճշտութեան մասին է)՝ այժմ չի գտնում համակրութիւն: Պարապէսների և ղեմակրատայի ճանապարհով դէպի սօցիալիզմ—անա մեր օրերի լոզունգը:

Մանաւանդ Ռուսաստանում մենք չըպիտի վախենանք Դումայի պահպանողական ընտրութիւնից: Մեր բարձր դատակարգիւրը (ազնականաւորութիւնը, հոգեբանականութիւնը և այլն) զուրկ են օրէ և հասարակական առարկան թիւններից և բարոյական ազդեցութիւնից: Նրանց զլխաւոր ոյժը—միապետութիւնն է, Սեր թուլացաւ այդ ոյժը, երևան եկաւ այդ գտնողագրիքի ոչնչութիւնը: Նրանք չկարողացան առաջին Դումայում 10 պատգամաւոր անդամ ունենալ (Բո որ պատգամաւորների թիւը մտաւ որպէս 500 էր): Նոր Դումայում, անպայման յետագիւմ կուսակցութիւնները համեմատաբար աւելի ուժեղ կլինին, ըստ առաջինում, բայց մեր խոր համոզմունքով, և նոր Դուման կլինի հակապետական և յեղափոխական:

Բոլորտիտները ապացուցանում էին, որ պարապէսներ թուլացնում է յեղափոխականների եռանդը: Միթէ առաջին Դուման հակայեղափոխական էր: Միթէ նա մեծ զարկ շուեց բաղաբական և յեղափոխական յարմանաւորութեանը, չիւանդոտ լիբերալիզմին յետագիւմ վախը յեղափոխական գործունէութիւնից, միւս կողմից անարիդիմը խորշում է պարապէսական գործունէութիւնից: Սօցիալիզմը չի փութնում ոչ պարապէսներից, ոչ յեղափոխութիւնից: Նա կուտում է բոլոր նպատակայարմար, լինեն նրանք որքանաւոր թէ ապօրինի, միջոցներով: Կա ամենաաւելի և ուղիղ տակաւորան է, Գիեիանոյր և նրան հետևող

մենշեկիները գրին պահանջ՝ «յեղափոխականացնել Դուման, Դումայից դէպի սահմանադիր մտղով: Այս տակտիկան աւելի լուրջ է և համապատասխան Մարքսիզմին, ըստ բայշեկիների անպայման բացասական վերաբերմունքը դէպի Դուման:

Բոլորտիտների վերջին և նոյնպէս անհիմն ապացոյցը այն է, իբր թէ Դուման կարելիութիւն է տալիս կառավարութեանը փոխառութիւններ անել և ուժեղանալ: Մերկրքս թերթը նոյնն է հաստատում: Կերջին փոխառութիւնը բացատրում է երկու զլխաւոր պատճառներով: 1) Տոկոսի բարձրութեամբ: Անդլիան տալիս է իր պետական կրեդիտորներին 2%, կամ 2 1/2 և օ, Ֆրանսիան 3 0 և այլն, իսկ վերջին փոխառութեան արկուքը, ինչպէս հաշուեց ԵՄԼԵ. ԵՆԱՑ հասնում էր 7(1)00, զազափարագաւորկ կապիտալը ուղղում է դէպի այսպիսի օգտաւէտ, թէև անբարոյական, ձեռնարկութիւններին: 2) Ֆրանսիան մօտ 7 միլլիարդ ոտու արժեթղթեր ունի: Նա ստիպում է նոր և նոր դուստրներ տալ անարկայած Ռուսաստանին, որ վերջինը կարողանայ գլխ տակտները, սրոնց թիւը սարքին հասնում է 400,000,000 ուարդու, անընդհատ լճաւորի:

Ես այսպէս Դումայի ժողովելը երկրորդական գերխաղապ այդ հարցում: Այդ միտքը յայտնեց, ի միջի այլոց ֆրանսիայի նրպարակախտ՝ Օլարը (տես. ԵՄԼԵ. ԵՆԱՑ):

Բոլորտիզմը, ինչպէս անարթխտական մատողութեան հետևանք, յատուկ է անդրապից մասնաներին, և հակառակ է լուրջ սօցիալիզմին: Ըստ սահմանադրութեան մասնակցելը ազատ է՝ ամեն մարդ կարող է օգուել և չօգուել իւր քաղաքական իրաւունքներով, Բայց դիտակից քաղաքացին իր բարոյական պարտքն է համարում իւր կարիքը և կամը յայտնել հասարակական հարցերի մասին: Միայն տղւտ և համով մարդիկ չեն օգուում երեւց ձայնից *):

Արեքն դէպի բնութական պայքար!

* Համաձայն լինելով Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու տարախային, սակայն համաձայն չենք յօգտմայի այն կարիքի հետ, որով նա բացառում է բոլորտիտների մասնակցելու հիմունքները: Ման. Խմբ.

ՄԵՉ ԻՆՉ Է ՀԱՐԿԱԿՈՐ՝)

(Ջրայցներ գիտադիմների համար)

ՄԱՅՈՒՄ

II

Մեր ասացինք՝ շատարակ ժողովրդի անբխտութեան ամենամեծ պատճառը երկուս են. մէկ՝ վատ, անարդար օրէնքները, միւրը՝ օրէնքներէ վատ գործադրողները, պաշտօնեաները:

Այժմ տանք մեզ մի ուրիշ հարց:

Ի՞նչ անենք, ի՞նչպէս վարենք, որ ունենանք համ լաւ օրէնքներ, համ էլ այդ օրէնքներէ լաւ գործադրողներ, որովհետեւ, երբ այդ երկու շարքները վերջած կլինեն, և կունենանք լաւ արդար օրէնքներ և լաւ գործադրողներ այն ժամանակ ժողովրդի դուրսեան էլ կ'լլաւանայ, նա անբան սանջանք, աղբատութիւն, զրբկանք չի քաշի, որքան որ բաշում է այժմ:

Այդ հարցերին պատասխանելու, այդ ցուղն գեղ ու զարման գանդու համար հարկատու է, որ մենք օրինակ վերջներս որիչ աւելի օրինաւոր, աւելի բարեաւոր, աւելի ազատ երկրներէրից, ինչպէս օրինակէ համար Անգլիան է, Ֆրանսիան, Եվլյաբիան և այլս և այլն:

Այնանդ՝ այդ ժողովրդներէ, երկրներէ մէջ էլ մի 100-50 տարի առաջ ժողովուրդը նոյն ցաւերն ունէր, ինչ որ տնի այսօր մեր երկիրը, մեր ժողովուրդը:

Բայց կամաց-կամաց այդ փոխւեց և մտան այնպիսի կարգեր, որ այժմ այդ երկրներէ ժողովուրդը տամն անգամ աւելի բազդատու է, բան առաջ:

Ի՞նչպէս եղաւ այդ:

Այսպէս:

Ժողովուրդը, տեսնելով որ իր խնդիրները, պահատանքը, իօտքը բանի տեղ չի անցնում, որ վատ օրէնքները միշտ էլ ձուռն են իր համար վատ, նա վերջապէս յամբարտութիւնեց զուրս եկաւ և վճեց օրէնքներ գրելու և օրէնքներ փոխելու իրաւունքը առնել իր ձեռքը:

Որովհետեւ խաթրով, խնդրեցով այդ բանը նրան չէին ապխուսեցնել որ նարուսաները, նա, ժողովուրդը սկսեց ապատամբել—գաղտնեց կառավարութեանը հարկ տալուց, հրատարեց օրք

ու զինուոր տալու, իսկ երբ եկան նրանից զուսով, ուսով հարկ ժողովել, զինուոր առնել, նա՝ ժողովուրդը զօսով, ուսով զինադրեց և զուրս արեց կառավարութեան պաշտօնեաներին իսկ տեղ տեղ էլ ինքը զօրքը հրատարեց կատարել կառավարութեան պահանջն ու հրամանները, նա անցաւ ժողովրդի կողմը, տեղ-տեղ կուրք այնքան մեծացաւ, որ բազմաթիւ մարդիկ կուտրեցին, սպանուեցին, կալանաւորեցին. բայց ժողովուրդը շլուսանաւուեց, շվախեցաւ և շարունակեց այդ կուրք իր իրաւունքներէ, իր որդիներանցը ապագայում աւելի բազդատու կեանք ստեղծելու համար այնքան, մինչև որ կառավարութեւնը յաղթեց և այգայլուով իշխանութիւնը, օրէնքներ հրատարակելու և փոփոխելու իրաւուրք անցաւ իրեն ժողովրդի ձեռքը:

Այն կուրքերը, որոնց նպատակը նոր, լաւ կարգեր ստեղծելն է կուսում է յեղափոխութիւն: Աւ մենք տեսնում ենք, ինչ ինչպէս շատ երկիրներում նոր կարգերի և օրէնքների ժողովրդի ձեռք ընկնելը կատարել է յեղափոխութեան միջոցով:

Ճիշտ է յեղափոխութիւնը ցանկալի բան չի, որովհետեւ երբեմն շատ զոհեր են զնում, բայց ինչ արած, փորձը ցոյց է տւել, որ առանց այդ զոհերի, առանց արիւնքի և յեղափոխութեան գըրէթի, անկարելի է լինում ձեռք բերել իրաւունքներ, արդար օրէնքներ, իսկ եթէ, ձեռք են բերւում, այդ տեսում է սանտեսակ տարիներ, իսկ այդ տարիներում ժողովուրդը աւելի շատ զոհեր է տալիս, աւելի շատ է սանջում և զրկանքներ կրում, քան եթէ, նա կատարում է յեղափոխութեան ժամանակ կամ նրա միջոցով: Աւ այսպէս յեղափոխութիւնը շահերի, օգուտների կուրք արդիւնք է:

Ազնականները, կալաւատեղերը, պաշտօնեաները իրանց շահի, իրանց օգտի տեսակէտից չեն ուղում որ օրէնքներ փոխւն կամ այնպիսի օրէնքներ ստեղծեն, որոնք կը սամանափակեն նրանց իրաւունքներն ու օգուտը, իսկ ժողովուրդը այնքան զիւրացինքը, բանուները, արհեստարդները ուղում են այնպիսի կարգ ու կանոն, որ իրանք ապատ, զրկւած, շարքեն, քաղցից ու շափից զուրս աշխատանքից շմտեն:

Միշտ յաղթում է այն կողմը, որը աւելի ուսեց

է, կամ թէ աւելի լաւ է կազմակերպուած: Եւ որովհետեւ կառավարութիւնները շնորհիւ զօրքի եւ զէնքի միշտ էլ աւելի լաւ են կազմակերպուած, ուստի մեծ մասամբ յաղթում են նրանք. իսկ որովհետեւ մեր ժամանակի կառավարութիւններից մեծ մասը կազմած են ազնւականներից, կալածատէրերից, հարուստներից, ապահով մարդկանցից, զրա համար էլ կառավարութեան յաղթութիւնը այդպիսի պետութիւնների մէջ, միևնոյն է թէ այդ դասակարգերի յաղթութիւնն է և ժողովրդի յետ Ֆլաու, աղքատութեան երկարանալը: Այժմ սեռնենք թէ ինչ է անում ժողովուրդը, երբ նա յեղափոխութեան միջոցով, կամ մի այլ ճանապարհով յաղթում է վատ և անարդար կառավարութեանը: Նա՞ ժողովուրդը ամենից առաջ մտածում է օրէնքներ ստեղծել, այնպիսի օրէնքներ, որոնք հարկաւոր են իրեն՝ այդ ժողովրդին և նրան միջոց կտան փոքր ի շատէ լաւ սպրեւու: Կ'կաշտոպանեն նրա իրաւունքները, այն դէպքում երբ որ է մէկը, ով և նա լինի, ուզենայ, նրան զրկել, կամ նրա վրայ ոյժ, ընտութիւն գործ դնել:

Ի՞նչ կնշանակի ժողովուրդը օրէնք է ստեղծում:

Դա չի նշանակում, որ ամեն մի տեղից վեր կենդ օրէնք է գրուած: Այդ անկարելի է և վնասակար, որովհետև ամեն մարդ էլ այնքան հասկացող չի, որ կարողանայ օրէնք գրել:

Այլ այդ կատարում է այսպէս:

Ժողովուրդը ընտրում է իր միջից այնպիսի մարդկանց, որոնք հնազանում են ժողովրդի շահերը, ծանօթ են նրա ցաւի, դարդի, կարիքների հետ. և ահա այդ մարդկանց են յանձնուած ժողովուն միասին և օրէնքներ հրատարակել:

Այդ ժողովրդից ընտրւած այն մարդիկ, որոնք զնախու են ժողովրդի համար լաւ և արդար օրէնքներ մշակելու, սահմանելու անսահմանում են պատգամաւորներ:

Բոլոր պատգամաւորների ժողովը, երբ զբանք ժողովուում են նոր պետութեան ժողովրդին կառավարելու՝ նոր օրէնքներ հաստատելու, կոչւում է Հիմնադիր ժողով, որովհետև հիմնական օրէնքներ են սահմանում:

Իսկ երբ հիմնադիր օրէնքներ սահմանւած են, այնուհետև քննուում են մասնաւոր, մանրամասն օրէնքներ՝ այս կամ այն հարցի մասին—

այդ ժողովուումները կոչւում են պատգամաւորական օրէնսդրական ժողովներ:

Օրինակ. երբ պատգամաւորները ժողովուում և վճռոււմ են՝ սովնել մտրդ օրէնքի առաջ հաւատար Լ— դա հիմնական օրէնք է, իսկ երբ այն մարդիկ գրում են կամ որոշում, որ այն մարդը ով որ իր ծառայողին հասնելը ունիլը կամ վարձը չի սպախել, նրանցից պէտք է առնել հասանելիք ունիլը և բացի դա պէտք է ն բուքլի տուգանքի ենթարկել, դա արդէն հասարակ օրէնք է, հիմնական օրէնքի բացատրութիւնը, նրա մի մասը:

Հիմնական օրէնքները շատ չեն լինում. օրինակի համար ընրենք մի քանի հիմնական օրէնքներ:

I. Բոլոր քաղաքացիները և զիւղացիները, լինին նրանք կին թէ պատմար, հայ թէ ռուս կամ ջնուգ, օրէնքի առաջ հաւասար են:

II. Ամեն մարդ ազատ է իր կրօնն ու համոզմունքն ունենալ:

III. Ամեն մարդ կարող է զրել, խօսալ, ինչ որ նա մտածում և ցանկանում է. զրա համար ոչ ոք չպէտք է պատժել, ոչ ոք չպէտք է ահարդարի:

IV. Մարդիկ կարող են ժողովներ անել ևսանց իշխանութիւնից իրաւունք խնդրելու:

V. Օրէնքներ հրատարակելու և փոփոխելու իրաւունքը ժողովրդին է պատկանում:

VI. Մահուան պատիժը դուրս թիւն չունի:

VII. Հողը ոչեւոր է պատկանի նրան, ով որ հողը մշակում է, նրա վրայ աշխատում է:

VIII. Պետութեան ներկայացուցիչը նախագահն է, որը ընտրւում է ժողովրդի կողմից և այլն և այլն:

Իսկ այն օրէնքների մանրամասնութիւնները արդէն հիմնական օրէնքներից են դուրս գալիս:

ՎՃԱՐՈՅԵԼԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ.

(Դիմում հայ դպրոցների նոցարոններին)

Հայ ծխական դպրոցները վերաբացւեցին: Հրաւիրւել են բազմաթիւ ուսուցիչներ, խեղճ ուսուցիչներ, բառիս բուն մտքով պրօեստարներ, որոնք թողած տուն, տեղ, հայրենիք, ազգական

և այլ մտորկային վայելքներ՝ մղած մի կողմից ասպրուտոր պահանջից, միւս կողմից ընտանեկի հողաբրից, մտել են պարոցական ասպարէզ՝ զիւղեբ, գաւառական ողորմելի քաղաքներ՝ կրթելու, ուսում զբազիրութիւն տարածելու մանուկ տեւունքի մէջ:

Քննենք, բնչ է ստանում այդքան աշխատանքի, այդքան զրկանքները համար հայ նահատակ ուսուցիչը, վարժապետը: Օրական 4—5 ժամ աշխատանքի համար, շնաշատ տետրակներն ու այլ անհրաժեշտ սնային աշխատանքները— դրանք ստանալու են ընդամենը տարեկան 200—500 բուբլի, որը, եթէ ժամերի վերածենք, կտանանք, որ իւրաքանչիւր ժամի համար ընկնուտ է 10—25 կոպ. վարձատրութիւն, ուրիշ խօսքով օրական 40—75 կոպ. մի որդմելի վարձ, որով նրանք պէտք է և իրենք ապրեն և ընտանիք, ծնող պահեն և բաւարարութիւն տան իրենց մարդկային ամենատարրական պահանջներին: Բաւական չէ որ մեր խեղճ ուսուցիչները այդպէս նաբառահարուում են, միւս կողմից զսիւս է մի այլ աւելի սոսկայի հանգամանք, այդ այն է որ մուրացկանական այգ վարձն էլ խեղճերը յամուսնակն շնն ստանում, այլ հոգաբարձութիւնը այսօր վաղը դեցնով, անիմներով պահում է զբնական ռոճիկները և ստիպում ատանց այն էլ զրկած ուսուցիչներին տանել զժոխային կեանք՝ միշտ սոված, միշտ պարտքերի տակ, միշտ սրա նրա երեսից կախած:

Խեղճ մարտիրոսներ, խեղճ հայ ուսուցիչներ...

Միթէ հնարաւ որ է այգպիսի պայմաններում կանոնաւոր, արդիւնաւոր աշխատանք, միթէ կարելի է այգպիսի կեանքով արդող ուսուցչից իր պարտաւնութիւնների կատարումն պահանջել: Փամանակ չէ՞ արդեօք, որ մեր հոգաբարձուները վերջ դնեն այդ օրինակ մուրացկան զբոսթեամբ պահել նահատակ ուսուցչին, սրով և նահատակում են և այն հարելաւոր մանուկներին, որոնք այդ ուսուցչից ուսում ու գիտութիւն են պահանջում:

Հոգաբարձուները միշտ էլ արդարանում են նրանով, թէ զարոցը միջոցներ չունի:

Բայց զոգ դատարի, անմիտ պարտաբարձում է, միշտ էլ, եթէ միայն զարօցի զըւսն են կանգնած եւանդուտ, հասկացող և ժողովրդի կողմից

ընտրւած և համակրութիւն վայելող հոգաբարձուներ, սյգպարսիները միշտ էլ միջոց ունեն ասպարտելու իրենց ուսուցչի ռոճիկը՝ կանոնաւոր վճարելով նրան:

Բայց հոգաբարձուները ոչինչ չեն անում, անտարբեր են և կամ, զբարւած իրենց աւօրեայ զործերով, ժամանակ և ջանք չեն դնում ժողովելու ժողովրդից փողերը՝ ծածկելու համար զբարօցի պարտքերը: Բաւական է որքան հարստահարեցինք առանց այն էլ ամեն բանից զրկած ուսուցչիներին, ցոնէ այն շնչին կողմէնները, որ խոտուացել էք տալ նրանց, աւել մամուսակնն, վնասեցէ՛ք կամոնաւոր: Իսկ եթէ զուգ զբարւած էք ձեր աւօրեայ զործերով, մի ստանձնէք հոգաբարձուի պաշտօնը:

Թողէք հրասարակը. հեռացէք: Զէ որ ուսուցիչը մարդ է, նա էլ հայր ունի, մայր, կին եղբայր, նա էլ սպրեւ, ուտել է ուղում:

Հեռացէք սոսպարիդից, եթէ չէք կարողանում ապահովել նրա խղճուկ ապրուստը— հայ նահատակ ուսուցչի ապրուստը:

ՋԱՆՎԱԿ

ԱՇԽԱՏԱՆՈՐԱԿԱՆ, ԽՐՐԱԿԻ ԿԱՄԱՌՈՒՄԱՐԸ

Այս օրերս ասարտեց իր զբաղմունքները աշխատաւորական խմբակի պարլամենտական գործիչների համագումարը:

Համագումարին մասնակցում էին 14 նահանգների ներկայացուցիչները: Մեծագոյն մասը ներկայացուցիչների զխաղաղութեան կողմից էին: Համագումարին նրախորած էին խորհրդակցական ձայնով աչքի ընկնող կուսակցութիւնները և ազդեցիկ պրոֆեսիօնալ միութիւնները. օր. ուսուցչական, երկաթուղային և զիւղաջրական:

Քննութեան զբաժնը վերաբերում էին խմբակի այժմեան կազմին քնակալարեբում և համագումարին հուաքած ներկայացուցիչների մասնանքի տրամազրութեան մասին սասցած տպաւորութիւններին:

Ներկայացուցիչների զհեղուցումներից պարզեց, որ աշխատաւորական խմբակը ամենից շատ է երթարելի կատարարութեան ընկալասիրտներին:

12 հոգի ենք ընելում այդ մասին հուաքած թեւերը: 10 հոգի քանտարեւած են, 10 հոգի քանտարեւած են և աղքատ, մէկը— գեանցումն է: Ուրեան, աշխատաւորական խմբակից Քեսաւ էլ են 34 հոգի:

Այդ թիւ մէջ չեն ժողովուրդը նրանք որոնք զատի են ենթարկւած՝ Կիրորգի կոչը ստորագրելու համար:

Դուժայի փակումից յետոյ դանազան կողմեր ցրւած պատգամաւորները չեն կտրի իրենց շարքերու թիւները խմբակի հետ. նրանք մեծ հետաքրքրութեամբ հետեւել են խմբակի կենտրին ու զործուէութեան և, հետագայում մնալով խմբակի փայտալուծ իրականներին ու յօդուներին, մեծ շահերով նպատակ են նրա՝ խմբակի ծառայմանը ու ուժեղացումը:

Եւ եթէ համագումարին բացակայում էին պատգամաւորները մի մասը, դրա պատճառը այն անհայտանմանի դրութիւնն է, որ ստեղծուել է նրանց համար՝ ուսուցիչներին ու դիմաւորում ծառայողներին զրկել են պաշտօնից, միւսները ոտսիկանական հակադրութեան են ենթարկուել և այլն:

Առանձնապէս հաւածանքի են ենթարկուել գիւղացի պատգամաւորները: Կառավարութիւնը նրանց դիմաւորել է կայարաններում կամ գիւղում դիմորդական օժտիւմ է նրանց ընկալալարի մտքի ունեցած ամեն մի զգացի, ցոյցը, պարտալին շարժման համար պատասխանատու է նամարի նրանց: Անպէս որ, գիւղացի պատգամաւորներից բնորոշ է յաջողիկ արտա մնալ քանտարկութիւնից, ստորից և փախուստից:

Գիւղի տրամադրութեան մասին յայտնած կարծիքները պիտու էին այն հանգամանքը, որ Դուժայում արտասանւած ճառերն ու ընդունւած ընդդիմացիաները մեծապէս նպաստել են գիւղացիութեան քաղաքական նստուկութեան:

Գիւղացիութեան մէջ տարածուած է այն դիտակցութիւնը. թէ առանց քաղաքական արտաբանութեան չի կարող լուծուել և ազդարարին հարցը: Օրինազանցից ասանման նստուկութիւն են գտել գիւղացիութեան մէջ անձի անհեռմանիցութեան և ազդարարին օրինազանցը: Աշխատաւորական խմբակի կողմից 104 ստորագրութեամբ առաջարկած պրոէկտը ամենուրեք հաստութեան է գտել: Միայն հարաւային ծայրերում իշխանաց էին տալիս. պիւնպէս կը լինի մասը սեփականատէրերի հետ. արքայքը վերջնականապէս որոշուելու են նուազագոյն կարգերը: Ընդհանրապէս ծայրերի գիւղացիութեան ցանկութիւնն է, որ նուազին հարցի ծայրամասնութիւնների ցնումիւրեւ և լուծումը թողնի տեղական շրջնային ինքնավարութիւններին: Իսկ կառավարութեան վերջերս ձեռնարկած միջոցներն գիւղացիութիւնը բոլորովին նստատ չի ընձայում և անհամբեր սպասում է նոր Դուժայի գումարման:

Դիմադրական տրամադրութիւնը տիրապետում է գիւղացիութեան մէջ ամենուրեք և ընտրութիւնների նմ կախում է գործի յաջող կազմակերպուելուց: Գիւղացիութիւնը պիտու կրել և աշխատաւորական խմբակին և ճանաչում է նրան, իբրև իր ձգտումների իսկական արտահայտիչ մի կազմակերպութիւն:

Ներկայացուցիչների ղեկուցումները լսելուց յետոյ, համագումարը անցաւ այն հարցին, թէ ի՞նչ գործունէութիւն և ի՞նչ նպատակներ պէտք է ունենայ խմբակը մօտ ապագայի նկատմամբ:

Համագումարին երևան եկան մի քանի նստուկներ: Մի մասը պնդում էր, թէ աշխատաւորական խմբակը պէտք է ձգտի քաղաքական կուսակցութիւն դառնալու, հետևաբար պէտք է ունենայ իր պարզ ու ուղիղ ծրագիրը: Երկրորդ մասը պնդում էր, թէ աշխատաւորական խմբակը պէտք է լինի մի միութեան, որի մէջ կարող են մտնել բոլոր տղան տարրերը, որոնք կազմակերպ ձախ են կանգնած: Երրորդը պնդում էր, թէ կարիք չկայ մշակել մանրամասն ծրագիր, բուսական է, ունենալ է ընդհանուր ղեկավարական պլան ֆորմ, որի շուրջը կարողանալ մասնաբաժնի գիւղացիութեան, քանորութեան և աշխատատեղի ինտելիգենցիայի գիտակից տարրերը, կարիք չկայ որոշել և օտակոխել, թոյլ նա լինի մի քիչ ստանդական՝ թիւերից միջոցն է անորոշութեամբ:

Երկուր փնտրումութիւններից յետոյ հարցը որոշուց նստուկայ կերպով. թողնել մէջխառտաւորական նմարկը անուշը և մշակել մի ընդհանուր պլանֆորմ իր անդամների համար, Կարողակերպել տեղերում խումբակի լուսամտուները: Տեղական րաժանմունքների պարտականութիւնն է լինելու մղել ուժեղ ազդեցիկ և ընդհանրացնել գիւղացիութեան ու բուսութեան մէջ խմբակի ինիտուկն գաղափարները: Կազմակերպել ընտրութիւնները՝ պաշտպանել պատգամաւորներին և այլն:

Համագումարը որոշեց յաջորդ համագումարը նրա կերպի մօտակայ ամիսներում, որին պէտք է ներկայ լինեն բացի Անտական Դուժայի անդամներից և գաւառական ներկայացուցիչները: Եւ այդ համագումարը վերջնականապէս կը մշակի պլանֆորման:

Դուժայի փակումից յետոյ ընտրւած և խմբակի գործերը վարող կոմիտէն որոշեց կազմալուծել ի համագումարի որոշումները իրագործելու համար ընտրել ժամանակաւոր մի մարմին:

Կառավարութեան կողմից նշուածների ենթարկւած ընկերներին օգնութիւն հասցնելու համար որոշեց ընտրել մի մարմին, որը խնամք է տանելու քանտարկուածների, գործազուրկների, գաղտի ենթարկուածների մասին:

Համագումարը որոշեց բոլոր համաժամ ընկերներին յայտնել իր համակերպը: Վերջում քննութեան դրեց ձախակողմանների քեզիկ հարցը: Համագումարը այդ հարցը օտակոխ թողեց, այլ թէ առաջ ունենալով այն հանգամանքը, որ քաղաքական կուսակցութիւնները դեռ չեն վճռել այդ հարցը: Համագումարը անեց չորս օր:

ԱՆՀԱՍԿԱՆԱԻ ԼՈՒՌԻՔԻՆ

Մենք սրտնից դեռ ևս մի քանի ամիս առաջ մատնացոյց արինք այն քրնածուի՞թեան վրայ, որին ենթարկել է երկու տարուց ի վեր մեր կրկնի միակ Գիւղատնտեսական Լճկերութիւն-Կովկասեանը:

Այժմ, երբ ողջ երկրում տիրում է սով, երբ գիւղական ազգաբնակչութեան հասգին մեծամասնութիւնը շնորհիւ կարկուտի, բղէզների և բնական այլ պատահարների անօգնական, թշուառ դրութեան մեջ է, երբ գիւղացիները ամեն կողմից օգնութեան և խորհուրդների են կարօտ երբ կարկըք սոսկալի շտիկեր առած գոտում է, երբ միւս կողմից հասարակութեան այս կամ այն շքրջաններում ծնւում, կազմակերպւում են գանազան նոր ընկերութիւններ՝ մտցնելով իրենց գործածութեան մէջ որպէս նպատակ օգնութեան զայ գիւղական ազգաբնակչութեանը, ա՛նա այսպիսի պիպիւններում լուս է և ճում է ի՞նչ շատերը իսպառ մեռած մեր երկրի այն միակ ընկերութիւնը որը ի կողմանէ պէտք է ամենից աւելի եռանդով աւ անճշտութեամբ զործէր: 20 տարիներից ի վեր Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան գուման են ցոյց տւել երկրագործին երբ նա մի հեղինակաւոր խորհուրդ է ուղղել, սակայն այսօր այդ ընկերութեան զոնեբը փակ են և փակ են երկու տարուց ի վեր:

Ճիշտ է մենք մեծ բան չենք սպասում այդ և այգորինակ հաստատութիւններից, որոնք շնորհիւ պետական ներկայ և անցեալ ըտղարակութեան ի՞նչ նոյն իսկ ցանկանային, անկարող էին մի ջոպփելի զործ կատարել, բայց այնուամենայնիւ (ի՛նչու է ինչ զէպքեր երբ նա որոշ հարցերում կարողանում էր հեղինակաւոր կարծիքը յայտնել, խորհուրդ տալ իրեն զիմողներին, նրա զանիճում անցնանքում արծարծել են լուս ձրազիրներ, այգտեղ ժողովել են միանման կրթութեան, մասնագիտութեան տէր անմիջք և շփելով, մտքերի փոխանակութիւն կատարելով կապւել են միեմանց նեւ:

Այժմ ոչ մէկը չկա: Ի՛նչու աւր է Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան մեռելութեան զատանիբը, մեզ անայստ է:

Նորից հրաւիրում ենք Ընկերութեան խորհրդին, պատասխանել մեզ և կամ մի անգամ ընդմիջտ դադարեցնել իր զոյուութիւնը կամ եթէ ապրում են սկսեն պործել, ժողովել, պարզել իրենց նպատակը հասարակութեան առաջ:

Ընկերութեան անդամները սպասում են:

ԱՆՉԱՍԿ:

ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր առաջն է մի ուշադրութեամբ փաստ: Եւ ուրախմի՞նք փաստ:

Շուտից որպէս իսկ ազգաբնակչութիւնը, յանձնել իր ներկայացուցիչներին, վերջապէս երևան է հանել, երկար ժամանակով ա՛ւ ու երկիւղի տակ զուլած, իր բողոքը, Բողոքը բռնութեան դէմ, բողոք կամայականութեան, շահատիրութեան, խնամակալութեան դէմ:

Նեոտէ խնամակալութիւնը, ազգի անուանից և նրա բարբիթից յոխորտացող պարուններ, բուսական է: Ձեր տիրապետութեան զանազան պտուղներից թունաւորւել է նա ժողովրդի ստորեայ կենսը: Ձեր անասման իշխանութիւնը ստրկութեան, թշուառութեան, նախատիրութեան ծայրայեղ դրութեան է նացրել հային՝ և այդ իշխանութեան ներքոյ ծել ծաղկել են միայն վայրենի, զազանային, անար և նողկալի երեւոյթներ, որոնք շատ տեղերում և շատ անգամ անիծել են տալի հային իր հայ ծնւելու օրը, որոնք սակ են տւել նրան. մենք գերազատում ենք զպափիւ մտաւրը, մենք գերազատում ենք սուս բիւրօղատուայի սպօրիտութիւնները, մենք գերազատում ենք «թուրքանալ» վերջապէս:

Նայ ժողովուրդը լոյ տաք իր արտասուքների մէջ, նա քանից այսուրդակած կիսների ամբողջ մտաւր, երբ մի կողմից նրա զվի զիւր կանգնել էր թուրք իր մաւն սպանանալով, միւս կողմից կոկորդ խեղճում էր բռնակալ օւսիւր, իսկ զուգ, մի երրորդ կողմից, նրան զբիւրջիկ անելու, նրա տանջանքները ակնթանելու, վերքեր խոզակում մէջն էիք որդնում ձեր գործը:

